ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022թ. մայիսի 17-ից 20-ը Ամերիկայի Միացյալ Նահանգներ (ք. Նյու Յորք) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը՝** Արմեն Ղազարյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝** ՏԿԵՆ Միգրացիոն ծառայության պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.** 2022թ. մայիսի 17-ից 20-ը Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Նյու Յորք

4. **Հրավիրող կողմը.** ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի նախագահ

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Մասնակցություն Միգրացիայի դիտարկման միջազգային ֆորումին

6. **Քննարկված թեմաները.**

Ֆորումի ընթացքում դիտարկվում է 2018թ-ին Մարակեշում ընդունված Անվտանգ, կանոնավոր և ապահով միգրացիայի վերաբերյալ դաշնագրին միացած երկրների գրանցած առաջընթացը տվյալ դաշնագրի նպատակների իրականացման ուղղությամբ

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Միգրացիոն ծառայության պետը ելույթ է ունեցել ֆորումի գլխավոր դեբատի շրջանակներում (ֆորումի անգլերեն տեքստը կցվում է):

Արմեն Ղազարյանը ֆորումի շրջանակում նաև երկկողմ հանդիպումներ է ունեցել, մասնավորապես՝ Դանիայի պատվիրակության՝ ի դեմս իմիգրացիայի եւ ինտեգրացիայի նախարարության պետքարտուղարի տեղակալ Հաննե Շտիգ Անդերսենի, Նիդերլանդների արտաքին գործերի նախարարության միգրացիայի հարցերով հատուկ բանագնաց Յուստ Կլարենբեեկի և Շվեդիայի Միջազգային զարգացման համագործակցության նախարարության պետքարտուղար Ջենի Օլսոնի հետ:

Կողմերի հետ Ա. Ղազարյանը քննարկել է ինչպես ընթացիկ, այնպես էլ հնարավոր համագործակցության հարցերը, ռեադմիսիոն գործընթացները, ներկայացրել է Հայաստանում ապաստանի համակարգը, մասնավորապես նոր հատուկ կացարանի

շինարարությունը ապաստան հայցողների համար: Գործընկերները դիտարկել են Հայաստանում գործունեության շրջանակն ընդլայնելու հնարավորությունը:

Որպես միգրացիայի կառավարման ոլորտում Հայաստանի կառավարության առաջնահերթություն՝ Ղազարյանը շեշտադրել է գործընթացների թվայնացումը:

Ֆորումի մեկնարկին ընդառաջ ՄԾ պետը հանդիպում է ունեցել նաև Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) գլխավոր տնօրենի՝ կառավարման և բարեփոխումների գծով տեղակալ Էմի Փոփի հետ:

Կողմերը կարևորել են երկկողմ կայուն համագործակցությունը: Ա. Ղազարյանը հատկապես բարձր է գնահատել ՄՄԿ-ի բազմաշերտ գործունեությունը, տարբեր ուղղություններով տարվող աշխատանքները, աջակցությունը Հայաստանի կառավարությանը միգրացիայի կառավարման ոլորտում բարեփոխումներին:
Միգրացիոն ծառայության պետը ներկայացրել է Հայաստանում միգրացիոն միտումների փոփոխությունները, անդրադարձել նախատեսված կառուցվածքային փոփոխություններին և ինստիտուցիոնալ բարեփոխումներին: Առանձնահատուկ շեշտվել է թվայնացման օրակարգի կարևորությունը միգրացիայի կառավարման բարեփոխումների շրջանակներում:
Էմի Փոփն ընդգծել է Հայաստանի նշանակալի առաջընթացը միգրացիայի կառավարման գործընթացում կարողությունների զարգացման համատեքստում: Նա շեշտել է, որ Հայաստանում ձևավորված մի շարք ինստիտուցիոնալ և ընթացակարգային լուծումներ, մասնավորապես վերադարձի և աշխատանքի թույլտվությունների տրամադրման ոլորտում կարող են ուսանելի լինել նաև այլ երկրների համար, ինչի ուղղությամբ ՄՄԿ-ն համապատասխան ջանքեր կգործադրի:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Ֆորումը քվեարկությամբ հաստատել է Առաջընթացի հռչակագիրը, որում շեշտադրվում են Մարակեշի դաշնագրի ընդունումից հետո միգրացիայի ոլորտում արձանագրված առաջընթաց քայլերը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Չկան

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

24.05.2022